

Ե Ղ Ի Շ Է

ԵՒ ՆԻԿՈԴԻՄՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆՆ

Ա.Ռ.

ԶԱՔԱՐԻԱ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ինչպէս կանուխէն ըսուեցաւ՝ Հայոց գլխովին անձանօթ է Նիկողիոսի Առաջապահ յղորդումը, վասն զի յիշեալ հրատարակութեան ծառայող և ինձ ծանօթ բոլոր ձեռագիրներն ևս կը կրեն հետեւեալ տիտղոսը, որ ըստ ամենայնի յունարէնին յար և նման է. այսինքն՝ ՅԵՏԱՍԿԱՐԱՆՔ ՈՐ ԵՂԵՆ ՎԱՍՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԱՋԻ ՊՈՆՏԱՑԻՈՅ ՊԻՂԱՏՈՍԻ՝ ԻՇԵԱՆԻ ՀՐԵԱՍԱՆԻ (= յուն. ΥΠΟΜΝΗΜΑΤΑ ΤΟΥ ΚΥΡΙΟΥ ΓΕΩΝ ΠΥΘΟΥ ΧΡΙΣΤΟΥ ΗΡΑΧΘΕΝΤΑ ΕΠΙ ΠΟΝΤΙΟΥ ΠΛΑΤΟΥ). Հայերէնի — այսպէս և յուն. — ներկայացուցած աոյն տիտղոսն ոչ միայն պաշտօնական ձև ունի, այլ և Պիղատոսի յիշատակարաններուն կամ դատավարութեան սկզբնագրի մը եւրեւթիւն։ Եւստ զարմանալի է սակայն տեսնել, որ հայերէն թարգմանութեան մէջ այդ իրարանման տիտղոսի ներքե կը պակսի Ἀναγινῶς նորադարձ հրէայ թարգմանչէն յօրինուած 16 տող Յառաջաբանն, այսպէս նաև (p. 285–280) յունարէն 11 տող վերջաբանը։

Հայերէն թարգմանութեան Բ. մասի խոբագիրն՝ ևս բառացի կերպով իոյն է յուն. (p. 287) բառարտառ խորագրին հետ, բայց վերջնոյս մանրագիր երկրորդ խո-

բագիրն (Անդ) չի գտնուիր հայերէնի մէջ։ Այսպէս նաև անոր ներքե անմիջապէս յաջորդող բնագրի ընդարձակ մասը (p. 287–311) չհամաձայնիր հայերէնին. այնպէս որ երկու կողմէն ընդհատ ընդոստ աղբրսք միայն կը նշմարուին։ Հայերէն սոյն մասի սկիզբն (էջ 345). «Եւ իբրեւ երեւոյ եղև, եկն այդ մի մեծատուն, որում անունն էր Յովսէփ, որ էր քաղաքապետ, այդ բարեգործ և արդար, յազակն Հրեից», ևն համաձայն է յուն. (p. 311) երկրորդ պարբերութեան «Περὶ ἐστέρων δὲ τῆς παρασχευῆς κατανύσσης τῆς ἀνύφου γυναικὸς καὶ πλοῦτος, ἰεσοεβίτης Ἰουδαίου» սկզբնատրութեան, բայց շարունակութեան մէջ վերստին կը զարտուղին իրարմէ բզալապէս։ Արդ՝ դիտելով որ հայերէն թարգմանութեան այդ մասն ամբողջութեամբ կը գտնուի Ա. մասին մէջ, այսինքն 332–345 էջերում, կ'ը հետևի որ սա ոչ այլ ինչ է՝ բայց եթէ 332–345 էջերում պարունակուածին անկատար մի այլ ընթերինակութիւն։ Ասով միայն բաղդաւոր է սակայն այս օրինակս, զի պահած է մեզ յուն. B մասի տիտղոսը, և ինչ ինչ բաներով կը լրացնէ առաջնոյն պակասը։ Ասով կը հաստատուի դարձեալ՝

1. Տես Ev. Apocr. p. 210–211. Տիշինգորֆի։
2. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ԹԱՂԱՄԱՆՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՈՒԹՈՅ ՄԵՐՈՅ

(— յուն. ΔΙΗΓΗΣΙΣ ΠΕΡΙ ΤΟΥ ΠΑΘΟΥΣ ΤΟΥ ΚΥΡΙΟΥ ΓΕΩΝ ΙΥΣΟΥ ΧΡΙΣΤΟΥ ΚΑΙ ΘΗΣ ΑΓΙΑΣ ΑΓΤΟΥ ΑΝΑΣΤΑΣΙΑΣ;

թէ Պիղատոսի Յիշատակարանաց յուն.
քնագրի Բ մասն եւս հայերէնի փոխած
էին մեր նախնիք:

Հայերէն թարգմանութեան մէջ սպրդուած
են փոքրիկ յաւելումներ, քրիստոնէական
ընտրոշ գունով. օր. աղագաւ, յէջ 345,
«Էւ նոր ժողովուրդը որք ի հեթանոսաց»
են 3 տողերն. յէջ 358, «Իսկ հաւատա-
ցեալն Յովսէփ ե իրկողիմոս հետեցան
աշակերտացն Յիսուսի, ե մկրտեցան յա-
նուն Հօր ե Որդւոյ ե Հոգւոյն սրբոյ» են
4 տողերն. յէջ 355. «Էւ Քրիստոսի
սքանչելագործութեանն փառք յիմանա-
լիաց ե ի ոգալիաց» են ծանօթ. նոտրա-
գրուած 7 տողերն, որոնք (ի թու. հայ.
ՊժԵ գրուած Թ. 433 Ձեռագրին մէջ) կը
կազմեն աւարտաբանութիւնը: Թէջ 365.
«Վասն դի ամսոյ չորեքտասանն էր, ե լու-
սինն՝ ներքին կիսագունդն» են նոտրագիր
18 տողերն (ըստ Թ. 1252 Ձեռագրին):
Թէջ 368-369. «Արի՛ք ի խորոցդ անդըն-
դոց՝ ի բարձունս երկնից» են նոտրա-
գրուած 40 տողերն. որոնք (ըստ Թ. 1252
Ձեռագրին) իբր թէ Պիղատոսի առ կայսրն
Հռովմայեցոց գրած նամակին մասը կը
կազմեն: Ասոնցմէ դուրս բաղդատողը պի-
տի գտնէ նոյնպէս ուրիշ մանր մունք յա-
ւելումներ ե յապաւումներ հայերէնի մէջ,
որոնք սակայն աննշան բաներ են, զի
պատմական պարագաներ չեն յայտնիր:
Իսկ յունարէնի ե լատին թարգմանու-
թեանց մէջ եղած յաւելումներն ընդհա-
կառակն յոյժ պարագայալից են ե Պիղա-
տոսի գործոց կամ իրկողիմոսեան աւե-
տարանի երեք մասերու յօրինման ժամա-
նակներն ու սահմանքը կը մատնանշեն,
մանաւանդ թէ անոնց միջև սերտ կապ մ'ի
միութիւն հաստատելու ձկտումը ցոյց կու
տան, որոնցմէ հայերէնն ազատ է:

Հայերէն յիշեալ հրատարակութիւնը
կրկին նամակներ¹ կը ներկայացնէ մեզ,
գրուած Պիղատոսէ առ կայսրն Տիրերիոս
կասին: Այս նամակներս խոտոր համեմա-
տովին ունին Տիշէնդորֆի հրատարակու-
թեան (Թ. 435) յուն. «Ἀναφορά Πιλάτου»
են, ե (Թ. 443) «Ἀναφορά Ποντίου τοῦ
Πιλάτου» են թուղթերուն հետ: Հայերէն
առաջին նամակը կամ ընդարձակ թուղթն,
— որուն հետ անյարմար կերպով միա-
ցուած է նաև Պիղատոսի իբր մեղապարտ
դատուիլն ե մահուան դատապարտիլն, —
յուն. վերջի Ἀναφοράςի հետ սերտ աղերս
ունի, որուն անմիջապէս կը յաջորդէ
«Παράδοσις Πιλάτου». իսկ երկրորդը՝
յուն. Α Ἀναφοράςին հետ: Հայերէն նա-
մակներուս վերնագիրներու ներքև դրուած
համառօտ յառաջարաններն — որոնց մէջ
զարձեալ Տիրերիոս կը յիշատակուի —
թէպէտև իրարու աննման պարագաներ
կը յայտնեն, սակայն հաւանական է որ
առաջինը վերջնոյն վրայ ետքէն ձևացած
ըլլայ: Յամենայն դէպս՝ գէթ նամակները
առանձին առած, մանաւաղ վերջինը հին
է ե կրկնակի հետաքրքրական. վասն զի
կը նոյնանայ լատ. (B) Descensus Christi
ad inferos մէջ (p. 411) ազուցուած
նամակին, որ կը կազմէ Gesta Pilati
(Պիղատոսի Յիշատակարանաց XII XXIX
գլուխը: Հաւանօրէն յունարէն քնագրին
մէջ եւս — յորմէ թարգմանուած է լատի-
ներէնը — նոյն տեղին ունենալու էր նա-
մակս՝ երբեմն ժամանակի՝ ուղղեալ առ
Տիրերիոս, բայց ետքէն ընդօրինակողաց
ձեռքով անկէց բաժնուելով Ἀναφορά Πι-
λάτουի մէջ անցեր է, ե կամ վերջինս՝
ժամանակաւ Պիղատոսի Յիշատակարանաց
մասը կը կազմէր: Այս բանս կը հաստա-
տուի ըստ իմիք Տիշէնդորֆի հրատարա-

1. Նամակներէն առաջինը որ կը գտնուի յէջ
358-378, համաձայն մեր Մտնդրնի թիւ 433,
386, 657 ե 1252 Ձեռագրաց, ունի սոյն խո-
րագիրը. «Թաղոր Պիղատոսի դատաւորի, զոր
գրիաց յաղագս Տեսան մարոյ Յիսուսի Քրիս-
տոսի, ե առաքիաց առ Տիրերիոս կայսրն ի
Հատմ»: Իսկ երկրորդին խորագիրն է այս.
«ՊՈՆՏԻՈՍ ՊԻԼԱՏՈՍ» ԹԱԳԱՍՈՐԻ ՄԵՆԻ (յա-
ռաջարանին մէջ Տիրերեայ) ԻՆԻԱԼ:

տոսի, ե առաքիաց առ Տիրերիոս կայսրն ի
Հատմ»: Իսկ երկրորդին խորագիրն է այս.
«ՊՈՆՏԻՈՍ ՊԻԼԱՏՈՍ» ԹԱԳԱՍՈՐԻ ՄԵՆԻ (յա-
ռաջարանին մէջ Տիրերեայ) ԻՆԻԱԼ:

կած առաջին 'Αναφορά Πλάτου ևն (p. 435) ներքև դրուած ծանօթագրութեամբ՝ իսկ, ուր յուև. երեք Ձեռագրաց համաձայն նախ Պիղատոսի Ա. Յիշատակարանը (= Υπομνηματα) ևս կը նշանակուին, ապա B Acta Pilati կամ 'Αναφορά: Ուրիմն հայն և լատինն՝ յունարէնին հետ ձեռք ձեռքի տուած Պիղատոսի առ Տիրերիոս գրած նամակով կը հերքեն կողմիս տարբեր ընթերցման վրայ յերկրած Հառնակի վարկածը՝ Պիղատոսի Յիշատակարանաց մեզ հասած ներկայ խմբագրութեան նորութեան նկատմամբ:

Արդ՝ մէկ կողմէն քաջ ի նկատի առած առաջին երեք դարերու Հարց և Զատագոփներու ծանրակշիռ վկայութիւնը, որոնք բացորոշ կերպով կը յիշատակեն Պիղատոսի Յիշատակարանաց գոյութիւնը, և միւս կողմէն ալ հայկական թարգմանութեան մեզ մատուցած և առին կապածէ ազատ ներքին հանգամանքները, որոնք հրեայուն² և զնոստիկեան նկարագիր ունին, և զուտ եկեղեցական տեսակետով չեն կարող մեկնուիլ, կրնանք այսպէս ձևակերպել մեր կարծիքը անվաւեր զրքիս հնուութեան և կազմութեան նկատմամբ:

Ա. Պէտք է ընդհինի՝ որ իրօք կատարուած է երբեմն Տեառն մերոյ Յիսուսի՝ Բրիտտոսի մասին՝ ինչպէս Հրէից կողմէն եղած ամբաստանութեան և դատաւարութեան, այսպէս ալ յետ յարութեան Բրիտտոսի՝ Հրէից քահանաներուն, իշխանաց և Պի-

ղատոսի ներկայութեամբ երկար և մանրամասն ճննութիւններ, զորս կը պահանջէին անտարակոյս թէ՛ հռովմէական արդարադատ օրէնք և թէ՛ Հրէից սրբազան Մատեանը, այնպիսի արտաովորու բովանդակ աշխարհի աշքին առջև կատարուած և անժխտելի դիպաց հանդէպ: Բնականաբար այսպիսի մեծ դատաւարութեան և հարցափորձի մը, ուր Հրէից ազգային անկախութեան անկման ճգնաժամը մէկ կողմէն, և միւս կողմէն ալ խաւարի իշխանութիւնն և աստուծային ճշմարտութեան յաղթանակը իրարու հետ կը մրցէին սաստկապէս, պէտք էր որ կոշտէին և մասնակից ըլլային բաց ի օրինաց վարդապետներէն, նաև Յիսուսի ծածուկ հետևողներն և ազդեցիկ իշխաններն Յովսէփ Արիմաթացի և Նիկողոիմոս, Կոռնելիոս հարիւրապետն և պահապան զինուորը, Ղազար, անդամաւործն, կաղը և կյուրք և բոլոր անոնք՝ որոնք երբեմն ենթակայ եղած էին Յիսուսի հրաշագործութիւններուն, ինչպէս նաև անոր հրաշափառ յարութեան տեսող վկաններն, և իբրև նորաքանչ վկայ՝ յարուցեալ ժամանակակից և շատերուն դեռ ծանօթ մեռելներն — ըստ որում պատմուած է Պիղատոսի Յիշատակարանաց կամ Նիկ. Աւետարանին մէջ:

Բ. Թէ բոլոր այդ հարցափորձութիւններն և բերանացի կամ զրաւոր կերպով մատուցուած վկայութիւնն, որոնց կուրիզ միայն աւանդել ուզած են կանոնա-

1. Որ է այսպէս. «Ita titulum habent CDE. A 'Αναφ. Πλ. τοῦ ἡμ. π. τ. κυρίως ἡμ. I. Χρ. π. Τιβερίω Καίς. 'εν Ρ.. B praemissis Actis quae dicuntur Pilati, sic habet: Υπομνηματα πρὸς θενα περὶ τοῦ κυρίου ἡμῶν 'Ιω. Χρ. ἐπὶ Ποντίου Πιλάτου τοῦ ἡγεμόνος τῆς Ἰουδαίας 'εἰσεπμφεν διὰ ἰβίας 'Αναφορὰς Ἀδριανῶς Καίσαρος 'εν τῇ 'Ρωμῇ. Sequitur illa temporis nota quam vidimus supra pag. 211 sq., (sub cod. E) 'εν 'εταί usque γράμμασιν 'εἰσβαλόντες»

2. Այսպիսի են, որ. աղագա (յէջ 313-320 ըստ հայ.) Յիսուսի ի պոսակութենէ ծնուած լալու ամբաստանութիւնը՝ Հրէից կողմանէ Պիղատոս, և երկար հարցաքննութիւնը. — յէջ 321 Մովսէսի և Յանէսի և Զամբրէսի գործած նշանաց բաղդատութիւնը. — յէջ 318 Պիղատոսի

հրէայ կնոջ մասնակցութիւնն՝ ի նպաստ Յիսուսի. — յէջ 331, «Հաղափիրք դրուի» և կամ ըստ միւս օր. «Յաղափիրք դրուի» երբայցեքերէն բացատրութիւնը, այսինքն՝ ի ձեռք չոս աւանդեմ զոգի իմ. — յէջ 333, Յովս. Արիմաթացոյն Հրէիցմէջ բանտուելուն, դրանց կնքուելուն, և հրաշքով արձակուելուն վերաբերեալ ընդարձակ հարցաքննութիւնը. — յէջ 351 և 354, երկհոս Սաբնդէք (կամ Սաբնդա) երբայցեքերէն հնազանդ անուան յիշատակութիւնը՝ փոխանակ Զիթնեանց լեւան, — p. 393-394, Աղամայ և Սէթայ մէջ եղած ընդարձակ խօսակցութիւնն, Աղամայ գրքին առնուած է. — p. 411 տապանի կազմութեան վերաբերեալ ժամանակագրական մեկնութիւնն, որ փոխել երբայցեքերէն փոխ առնուած է, ևն ևն:

• Կան չորս Աւետարանիչք, այն ժամանակ Պաղեստինու մէջ տիրող ասորաքաղաքներէնով խառն եբրայեցիներէնով և լատիններէն լեզուով ի գրի առնուէին և պահուէին Նրուսաղէմի Պրիտորարիոն դիւանատան մէջ:

Գ. Թէ Պիղատոս դատաւորը մէկ կողմէն համոզուած Բրիտոսի անմեղութեան և աստուածապէս յարութեան ի նպաստ տրուած անժխտելի վկայութիւններէն և իր կնոջ Թախանձանքէն, և միւս կողմէն ալ երկիւղ կրելով հռովմէական զօրականաց և Քրիստոսի հաւատացողներէն իր վրայ ըլլուելիք ապագայ ամբաստանութիւններէն և ծանր պատասխանատուութիւնէն, ինչպէս նաև Հրէից չըմբռնողներէն՝ պէտք էր որ փուլ թայր կազմէր—հռովմէական օրինաց համաձայն — և կազմեց իսկ անտարակոյս յիշեալ դիւանական գործերէն — հաւանօրէն լատին լեզուով — ընդարձակ յիշատակագիր մը, և ինքնագիր նամակով մը յղեց զայն առ կայսրն Տիրերիոս. որոնք ապա անուանեցան Յիշատակարանք Պիղատոսի (Acta Pilati): Այդ Յիշատակարանաց զօրութեամբ է որ ետքէն Պիղատոս ինքնին իբր անիրաւ դատաւոր և քրիստոսասպան Հռոմայ ծերակուտէն իբրև յանցապարտ դատուեցաւ. և կամ այդ Յիշատակարանաց վրայ յօրինուեցաւ Παράδοσις Πιλάτου, որուն հայերէն թարգմանութիւնն, ինչպէս տեսանք՝ Պիղատոսի Ա. նամակին հետ միասն ցած է: Պիղատոսի այդ Յիշատակարաններուն վրայ է որ փրկչ. թուականին 41—54. քրիստոնեայք, օժտուած Պատրոնիկէ բաւական Տիկնոջէն, հրաւիրեցին Կոզդիոս Ա. կայսեր ուշադրութիւնը, խստութիւններ ի գործ դնելու անհաւան և հակառակամարտ Հրէից դէմ. և հաւանօրէն այդ միջադէպն ակնարկելու համար է, որ Պետրոսի և Պօղոսի գործոց անյայտ հեղինակը կը յիշատակէ Պիղատոսի նամակն, իբր թէ ուղղեալ առ Կոզդիոս: Այդ Յիշատակարաններուն վրայ է դարձեալ, որ — յիշեալ Գործոց կամ Քարոզութեան մէջ — Պետրոս և Պօ-

ղոս առաքեալները կը հրաւիրեն Ներոնի ուշադրութիւնը՝ իբր պատմական և պաշտօնական ստոյգ վկայութիւններ Քրիստոսի Տեսն մերոյ աստուածութեան և հրաշափառ յարութեան: Մէկ խօսքով՝ այդ դիւանական Յիշատակարանաց՝ կամ եբրայական սկզբնագիրն և կամ լատին խմբագրութիւնն է անտարակոյս՝ զոր եւ ճանչցան եւ իբր հանրածանօթ հեղինակութիւն ի վկայութիւն բերին ընդդէմ Հրէից և հեթանոսաց Յուստինոս վկայն, Հովիւ Հերմաս, Որոգինէս, Կղ. Աղեքսանդրացի, Տերտուղիանոս, Եպիփան, Թէոփիլոս Անտիոքացի և այլք, իրենց Ձատագրութիւններուն և աւետարանաց Մեկնութիւններուն մէջ՝ մինչև Դ. դար:

Դ. Թէդոս Մեծի հրկայատնութեան եօթնևտասներորդ տարին և վաղեմտիներն ի. ընդդիմադրեալ իններորդ տարին (համաձայն ի. դարուն գրուած Ղպտերէն Զնոսագրին և յոյն և լատիններէն) առաջին անգամ եբրայեցիներէն յունարէնի փոխուեցան այդ դիւանական Գործերն՝ Նիսիաս կամ Անանիաս անունով նորադարձ և օրէնսդատեց հրէի մը ձեռքով, որ ինքզինքը Պրոտեկտոր ևս կը կոչէ Յառաջարանութեան մէջ: Թարգմանիչս դժբաղդաբար իր ծննդավայրին, ազգատոհմին և նպատակին վրայ բնաւ տեղեկութիւն չի տար, և ոչ իսկ թէ ո՞ր գտած էր այդ եբրայական լեզուով և Պոնտիոս Պիղատոսի ժամանակ գրուած Յիշատակարանքը. այսչափ միայն կ'ըսէ՝ Թէ ինքը ծննդեամբ հրէայ էր, և սուրբ Գիրքը կարդալով՝ Յիսուսի Քրիստոսի հաւատացած և մկրտուած էր. և թէ յետ իւր դարձին՝ իր կարեւոր գործն եւ դած էր՝ որոնել գտնել եբրայեցիներէն յիշեալ Յիշատակարանները, և գտած էր զանոնք՝ Յիսուսի Քրիստոսի կամելով Գիտելով որ թարգմանչիս գծած ժամանակն և հրէական ծագումն ունենալը քաջ կը յարմարին՝ ՅԱՅԻՆ Ա. Եպիփանու ձեռքով ի քրիստոնէութիւն դարձող Եպիփան հռե-

1. Ասիոնքն նա ծնած է հրէայ ծնողացմէ յամի Տեառն 310—320, և իր կենաց 16—20 տարեկան

հասակին մէջ դարձած է ի քրիստոնէութիւն՝ Ղուկիոս անունով միայնակեցի մը ձեռքով, համա-

տորին, և նոյն իսկ Եպիփան Կիպրացուն, հաւանական է նոյնացնել զանի ասոնցմէ միոյն կամ միւսին հետ: Նկատմամբ վերջ-նոյն դիտելու է որ Եպիփանիոս անտարա-կոյս մկրտութեան ժամանակ առնուած յունական անունն է. ուստի Թարգմանիչն ալ իր հրէական ծագումը մեզ ծանուցած ժամանակ՝ բնական էր որ իր նախկին անունը — Արամիս — յիշէր: Անանիաս թէպէտև ինքզինքը պարզապէս Թարգմա-նիչ եղած կը յայտարարէ երբայական Յի-շատակարաններուն, և իր զանոնք Թարգ-մանելուն բուն նպատակը լռած է. սա-կայն ըստ իս նա Թարգմանութենէն աւելի ուրիշ դեր մ'աւ կատարած է հաւանօրէն, այսինքն՝ ճշմարիտ իմբագրի: Աղբարև նա այն հինաւորաց յիշատակարանները, որոնք իւրարմէ անշատ և անկարի էին իսկզբան, հարկադրուած էր իրարու հետ կապելու համար նաև փոքրիկ Յառաջարաններ և վերջարանութիւններ աւելցնել — որոնք՝ ինչպէս տեսանք՝ իր պակսին հայկ. Թարգ-մանութեան մէջ: Բայց սորա կատարած դերն ամբողջապէս որակելու համար, հարկ է նկատել որ նա այդպիսի գործի մը ձեռք զարնելու համար՝ կրկին նպատակ դրած էր իր առջև. այսինքն՝ նախ իր ազգին աւ-տուածոնտի մարգարէից և նահապետներու վկայութիւններով հարստացնել Քրիստոսի աստուածութեան նպատակը և բացայայտ փաստերը — որոնք գուցէ կը պակսէին Պիղատոսի յիշատակարաններուն մէջ, —

և հարստացուց իւր ազգայինները համո-զելու և դարձի բերելու համար:

Դարձեալ Սաղուկեցոց մոլորութիւնը, Քրիստոսի ստուգապէս յարուցեան դէմ, գնոստիկեանց ձեռքով չափազանց տարա-ծուած էր՝ առ Մեծն Թէշդոսիւ՝ ըրիստոնեայ ազգարնակութեանց մէջ ևս. ուստի ինչպէս մի ուրիշ անյայտ հիղինակ Թէշդոսի և ժամանակակցաց կրօնական ցանկութիւնը գոհացնելու համար գրեց Եփեսոսի եօթն մանկանց պատմութիւնը. այսպէս նաև յունաօրէն Թարգմանիչն — ով ալ ըլլայ — հաւանօրէն մի և նոյն բարի նպատակաւ Պիղատոսի երկամասն Յիշատակարանաց վրայ՝ աւելցուց երրորդ մ'ալ, այն է Քրիս-տոսի էջն ի դոգմա, այլովք հանդերձ, հա-նելով զանի Նիկողիմոսի առ Պիղատոս մա-տուցած առանձին Տիգրէկարէն, կամ լաւ ևս ընդարձակելով անոր մէջ աւանդուածներն Հրէից նախապէս, այն է ծննդեան առթիւ, եղած հարցափորձին վրայ: Լեկիպոս և Կա-րինոս յունահռոմէական անուններն իսկ, որ ընծայուած են Սիմէոն ծերունոյ յարու-թիւն առնող երկու որդւոց, այսպէս նաև վերջարանը՝ որ կ'աւարտի ի փառս յարու-ցելոյն Յիսուսի Քրիստոսի, զայս կը Թուին հաստատել. այսինքն թէ իրօք բարենպա-տակ կեղծիք մ'եղած է:

Ե. Պիղատոսի Յիշատակարանաց և Նիկ. Աւետարանի յունարէն այս իմբագրութիւնս հաւանօրէն ծառայեց՝ իբրև հիմն և բնա-զիր՝ յիշեալ դարէն վերջ կատարուած

ծայն իր կենսագրութեան հայերէն Թարգմանու-թեան մէջ աւանդածին: Քիչ տարի ետքը Վիճա-բանութիւն ունեցեր է իր անուանակիրք մի ճար-տասան իմաստասերի հետ, և յաղթահարելով զանի, վկայութեամբ Ս. Գրոց, քրիստոնեայ դարձուցած:

Բ. Զօրաւոր կուուան մ'է դարձեալ՝ ըստ իս՝ նաև այս. զի ոչ ոք ի Հարց այնքան ծանօթ է Հրէից գրոց և աւանդութեանց, զորս կը տեսնենք Եպի-փանին իմծայուած 366 ճառերուն մէջ, որոնք կը կրեն ի սկզբնագիրն այսրաթոց, և յաւետարաւ, նախան քարոզութեանց որ ըստ Ղուկայ: Արդ՝ այս ճառերէս Ժէ. Ե՛ ուր նկարագրուած են ման-րամասն Հրէից քահանայապետաց կողմէն կա-

տարուած հարցաքննութիւններն և փորձերը Ս. Կուսիին վրայ, որ իբր թէ ապօրինի ամուսնու-թեամբ յղացած ըլլար զՅիսուս Քրիստոս, նման է Նիկողիմոսի Աւետարանին մէջ պատմուած, կամ լաւ ևս Պիղատոսի ներկայութեամբ Հրէից քա-հանայապետներուն Յիսուսի դէմ բրած ամբաս-տանութեան, այսինքն՝ որպէս թէ ի պոռնկու-թենէ ծնած ըլլար, և դատավարութեան նկա-րագրին: Հետեւաբար՝ կամ Եպիփանի ծանօթ էին այս գաղտնավարութեան հրէական Յիշատակա-րաններն, և կամ նա ծննդեան առթիւով Ս. Կու-սին դէմ եղած հնագոյն յիշատակարանաց վրայ յօրինած է Նիկողիմոսի աւետարանին մէջ պատ-մուած յիշեալ ամբաստանութիւնը:

հայերէն¹, ղպտերէն, լատիններէն և ուրիշ թարգմանութիւններուն:

Արդ՝ ի նկատի առած մէկ կողմէն Եզդիշի այս մասէն ըրած տեղտեղ ազատ և տեղտեղ ալ զբեթէ բառացի փոխառութիւններն, և միւս կողմէն ալ Եզդիշէն աւելի հին ղպտերէն և յունարէն Չեռագիրներն և մատենագիրները, որոնք զայն իբրև ստուգապէս հեղինակական և հնագոյն գրուածք մը կը ներկայացնեն մեզ, բնականաբար կը հետաքրքրուինք հարցընել, թէ արեւոյ Եզդիշէն այդ գրքի յօն բնագրէն ուղղակի օգտուած է, թէ ընդհակառակն անոր հայերէն թարգմանութենէն, որ ամբողջապէս թարգմանուած էր երբեմն անշուշտ և սակայն կամ մեզ հասած չէ, և կամ զեռ ինձ յայտնի չէ: Առ այժմ որոշ վճիռ մը չեմ կարող տալ այս ծանրակշիռ հարցերէն միոյն կամ միւսին ի նպաստ. այլ այսչափ կրնամ ըսել՝ որ Եզդիշի բառացի կերպով մէջ բերած տեղերն՝ Նիկողիմոսեան Աւետարանի հայերէն թարգմանութեան գէթ Ֆնացած մասի շաւրադրութենէն տարբեր և բարձր լեզու մ'ունին:

Այս նկատմամբ կարևոր կը դատիմք իշ մը կանգ առնուլ Ամորդայն վանաց հնագոյն Չեռագրէ մ'ընդօրինակուած մեր թիւ 657 գրչագրին (ԻՌ. Ճաղընտիրն) վրայ, որ կը ներկայացնէ մեզ «Երանելոյն Եպիփանուս Կիպրացոյ աստգեայ՝ Յսոյ մեծի յարութեան Յիսուսի Քրիստոսի և աս Յովանէս» խորագրուած ընդարձակ ճառ մը, որ կը սկսի. «Չինչ է այս, այսաւր լուծիւն յերկրի» և կը վերջանայ. «Որ և զմեզ զամենեւեան զհաւատացեալս աւանպականս յարուսցէ քրիստոս աստուած

ի յաւուրն յետնում. ամէն» բառերով, կու գայ մեզ գոցցեա ըստ բաւականի լուծել ո՛չ միայն Նիկողիմոսի Աւետարանի ներկայ խմբագրութեան, այլ և Եզդիշի փոխառութեանց գաղտնիքն: Մենք վերը արդէն ըսինք որ հաւանօրէն Եպիփանուս զած ըլլայ Նիկող. Աւետարանի յունարէն թարգմանողն և յարասողը: Արդ այս ճառովս — որուն յուն. խորագիրն աւելի ընդարձակ է — (տես Զարք. Թարգմ. Նիսիսեաց, եր. 416), աւելի կը հաստատուի մեր կարծիքը. վասն զի հոս ևս հեղինակն ոչ միայն հաւաքած է Նիկղ. Աւետարանի գրեթէ բոլոր էական կէտերը, այլ և տեղտեղ գեղեցիկ յարասութիւններով ընդլայնած իսկ:

Գալով Եզդիշի՝ զարմանքով տեսայ՝ որ այն տեղիքը կամ բառերն, որոնցմէ ոմանք մեր վերի համեմատութեանց մէջ չէին համապատասխաներ Նիկղ. Աւետարանին, կը նոյնանան Եպիփանէն ընդլայնուած տեղերուն. օրինակի աղագաւ, յէջ 7, վերջին պարբերութիւնն, ուր կը յիշուին Աբրահամ, Իսահակ, Յակոբ, Նոյ, Աբէլ, Մովսէս, Մեղքիսեղ, զեկ և ամենայն արդարք, համառօտուած է Եպիփանի յիշեալ ճառի (Թղ. 6բ) ընդլայնուած տեղէն: Այսպէս դարձեալ Եպիփանի, Թղ. 6բ, «Յիսուս ո՛ր երթայ, կամ զինչ է խորհուրդն որ ի դժոխս իջանել. վասն զի զԱլլամ դատապարտեալ՝ ի տեսանել և վերաբերել և ի կեցուցանել կրթայ»: Թղ. 7բ, «Արդ յորժամ հանին (երկնային զաւաւրք) յամենայն դրունս զոռ, խոց, յանձանել յառոյ յանել և կոյանքն և յարկքն յցան յաստի»: — Անդ. «Այսպէս արար քրիստոս ի դժոխս՝ յերթայ խորոյ

1. Որ կրկին խմբագրութեամբ հասած է մեզ: Ողբա ոչ միայն յունէն, այլ և իրարմէ մեծապէս կը տարբերին, ուստի շատ հաւանական է որ ասոնցմէ մին կամ զպտերէնէ կամ յասորւոյն թարգմանուած ըլլայ: Բայց անելի ուշադրան այն է՝ որ Նիկ. Աւետարանի այդ կարևոր մասը, այն է Descensus Christi ad inferos, ոչ մէկ և ոչ ալ միւս թարգմանութեան մէջ կը գտնուի այսօր:

2. Այս առթիւ դիտել կու տամ, որ սոյն ճառընտիրը մեզ ներկայացուցած. Թուրք Պիղատոս դատաւորի՝ ուս Տիբեր կայսր, են ի մէջ ևս նոյնը կը գտնուի համառօտիւ, այսպէս «Եւ յաւազում մեղաւոր յարեան, որպէս շրեայք վկայեցին», թէ. Աւետարանի տեւաք զԱլլարանի, և զԿասանի, և զՅակոբ, և զերկոտաւսմ նանա պիտուն» ևն:

փառացի, յանկարծակի եղև ի վերադառնալ փառ-
լակե... գաղութականն էր որոտումը ձայնի»։
— Անդ. «Եւ նոյն ժամայն դրունքն բա-
ցան, և շարայքն լուծան, և փախաւրն կո-
տորեցան. նոյն ժամայն և աշխարհ լուծան և
անկան առ ժամայն, և հիմունքն բացան և
պարիսպքն կործանեցան, և խաւարային գաղ-
քն փախաւսական եղև»։ — Թդ. 8ա,
«Եւ մին զմինն ի փախուստ փառացուցա-
նէին՝ քանզի սարսկին. շարժեցան, շփո-
թեցան, ընդոստ կացին, խառնակեցան...
սկսարացան և կացին պշտեցաւը»։ — Անդ.
«Այլը անկանին յերկիր, այլը ի ներքո
ի խաւարն փախէին... խորտակեցան ընդ
միմեանս»։ — Անդ. «Ո՛վ է սա թագաւոր
փառաց, տէր զդառ ի գաղութական, տէր
սնտար ևս անշար ի պատերազմի։ Ո՛վ է
սա որ աշխարհ բռնաբարէր քանակ ի մեկ
զայտեկն կապար»։ — Անդ. Այժմ
կործանեցաւ ձեր բռնաբարեղ, ապանշու
կորեալ»։ — Անդ. «Ի զրանց կայնինցն ի
ներքս փախչէին. և այլը ի ծերպս և ի
խորս և ի յայրս փախչէին փառով»։ — Թդ.
7ա. «Զխորդ յայնժամ յորժամ ի դոխս
բլբռնեցաւ գաղութական յափշտակողին, և
ժողովին ամենայն յարքն ի նայտարեղ փառ-
լատականցն յառոյ տեսան սատուածորոյն՝
սատական կործանեցան. անշուրս երարձ
զնոսա ի միջոյ, և զդրունս յանիւրտա»։
— Անդ... «Եւ բեւեռաւ աստուածային
ձեռաւն իրիկ զմում ձայնաց» են տեղերն՝
կը համաձայնին յէջ 6 Եղիշէի 1 և 2-րդ
համեմատութեանց, յէջ 7, Եդ. 2-րդ 3-րդ
և 5-րդ համեմատութեանց, և յէջ 9, Եդ.
5-րդ և 6-րդ համեմատութեանց մէջ գործ-
ածուած բառերուն և բացատրութիւննե-
րուն։

Արդ՝ եթէ հարազատ է Եպիփանի յի-
շեալ ճառը, կը հետեի անշուշտ՝ որ Ե-
ղիշէ ուղղակի զանի ևս ճանչցած և գոր-
ծածած է իբր աղբիւր։ Թէպէտև Ներշըլ
և ուրիշ հայրախօսք իսկ կ'երկբային այս
ճառիս հարազատութեան վրայ, և կ'ըն-
տրեն Զ. կամ Է. դարում ապրող ուրիշ
Եպիփան կիպրացւոյ մը տալ, այլ ևս Ե-
պիփանի ոգւոյն և վարդապետութեան հա-

կառակ ուրիշ բան մը չեմ տեսներ այս
գեղեցիկ ճառին մէջ, բացի լեզուէն՝ որ
կը թուի 485—615ի նկարագիր ունենալ,
և Նիկի. Ալեստարանի հայ. թարգմանու-
թեան լեզուին ամենամոտ, բայց աւելի
շուայլ և առատ բանիւր։ Արդ՝ եթէ յու-
նարէն բնագրի բաղդատութեամբ օր մը
ապացուցուի որ՝ ինչպէս Եպիփանի ի
սկզբնային արարածոց և առաջադասակ
բարդութեանց որ ըստ Ղուկայ ճառերուն,
այսպէս և ասոր մէջ Զ. դարու հայ վար-
դապետ մը յաւելուածներ ներմուծած է
Նիկի. Ալեստարանի հայ. թարգմանութեան
օգտուած, այն ժամանակ կը հետեի միան-
գամայն, որ յիշեալ Ալեստարանի հայեցի
թարգմանութիւնն ամբողջապէս ունեցած
է իր առջև հայ խմբագիրն կամ ներմու-
ծողն։

Հարցերէս առաջնոյն դրական կամ
ժխտական կերպով պատասխանելն առ
այժմ անյարմար կը թուի ինձ, զի Եղի-
շէի մէջ բերուած դրուագի լեզուն և ոճը
շատ կը տարբերի Պիղատոսի Յիշատարա-
նաց լեզուէն և ոճէն, որ թէև բաւական
յստակ է, բայց Զ. դարու նկարագիր ունի
աւելի քան Է. ինչ իսկ գալով վերջնոյն
բաւական կուտաններ ունինք առջինիս։
Ինններորդ դարու մեր պաշտօնագաւոր գրող-
ներէն մին, այն է՝ Զաքարիա կաթողի-
կոս, որ գիտցեր է գեղեցիկ լեզուով և
պերճախօսութեամբ խոսացնել՝ իր ճառե-
րուն մէջ յունական Հարց և ջատագովե-
րու երկուքը, միացնելով զանոնք իր ինք-
նաբոյս մտածութեան և յացուցնելուն
հետ, ոչ միայն ճանչցեր է նիկողիտեան
Ալեստարանի խնդրոյ նիւթ եղող Գ. մասը,
այլ և ընդարձակ փոխառութիւններ բրած
է անկէ՝ իր ի մեծի առաջ շարարուն բաղ-
ման Տեսան Յիսապի Գրիստոսի խորա-
գրուած ճառին՝ մէջ. այսինքն է սատանի
և զօրիոց իշխանութեան և մահուան

1. Ար կը սկսի. «Յիսիկան ի գնացիլումն
ժամանակի ժամու առաջն» բառերով, որով
կ'անկարկուի Մեծի ուրբաթու կամ շաբաթա-
նաց ճառը։

թագաւորութեան միջև եղած խօսակցութիւնքն և խորհուրդները, Քրիստոսի ի դժոխս իջնելուն և աւերելուն նկատամբ, այլովք հանդերձ: Եւ ընթերցողներուն զիւրամատչելի և ակնեւ ընելու համար, կը դնենք հոս այդ փոխառութիւնները՝ լատին **Δ** թարգմանութեան համեմատութիւններով — որ ընտրելագոյնն է ըստ Տիշենդորֆի — մտածելով որ յունարէն ընագիրն շատեւ

բուն անմատչելի պիտի մնայ: Բայց նախապէս հարկաւոր կը համարիմ հրաւիրել յարգելի ընթերցողներուս ուշադրութիւնը մի ուրիշ կէտի վրայ ևս, որ առաջինէն ոչինչ նուազ կարեւորութիւն ունի ըստ իս. այսինքն թէ Եղիշէի յիշեալ ճառէն ևս օժտուած է մեր միջնադարեան պերճախօսը, ինչպէս պիտի տեսնուի ի հանդիպով զրուած համեմատութեան:

ՁԱՔ. ԿԱԹ.

EVANG. NICOD. P. 388-430

« Եւ վարանեալ սատանայի, տարակուսեալ յերկուց կողմանցն, և ասէ ցիշխանութիւնս դժոխոց, և ցթագաւորութիւնն մահու. Ամենայն մարդկան յաղթեցի, այս վեց հազար ամ է, սկսեալ յԱդամայ մինչև ցայժմ, և այս Յիսուս Նազովրացի զարհուրեալ վրդովէ զիս: Արդ՝ ո՞վ սիրելիք և գործակիցք իմ, եկայք տեսցուք՝ եթէ զի՞նչ հնարեսցուք նմա:

Եւ ասեն ցնա պետութիւնքն դժոխոց, և իշխանութիւնք մահու. Ո՛րպէս իմացար զծնունդն նորա յաշխարհի, ըստ հասարակաց մարդկան, թէ այլ սքանչելեաւք. քանզի ասաց ոմն մարգարէ՝ եթէ ի կուէծնցի մանուկ, և յորջորջի աստուած:

« Ասէ սատանայ. Տեսի ևս զԳարբիէլ եկեալ յերկնից առ մարիամ մայր նորա, և կամեցայ իմանալ զխորհուրդս և զպատճառ իրին, եթէ վասն է՞ր եկն մեծ զաւրավարն. և բազմութիւն զաւրաց նորա հալածեցին զիս և ոչ ետուն իմանալ զխորհուրդս գործոյն. և ի ծննդեան նորա իջին բազմութիւնք հրեշտակաց և մոգքն...

« Ասեն տէրութիւնքն դժոխոց և իշխանութիւնք մահու. Մեծ զարմանք են և արհաւիրք՝ Աստուծոյ մարդ լինել. բայց տեսաք ի նմա նշանք և արհաւիրք հրաշափառագոյն և գերազանց քան զմարդոյ, քանզի զդուստր Յայրոսի, և զորդի այրոյն յափշտակեալ եհան ի մէնջ:

« Ասէ սատանայ. Զայդ Եղիա և Եղիսէ գործեցին:

(Եղիշէ՝ էջ 9. ՀՄԲՏ. 4)

«Ասե՛ն պետոսրիւնք դժոխոց և իշխանութիւնք մահու. Երբ աշխատարեամբ և աշարիւք գործէին, իսկ սա՝ իշխանութեամբ: Դարձեալ, ասե՛ն. Փառեալ ենիւնցոյք զմարմինն Ղազարոս, և լռեալ քակեցաք զչիր և զանդամս նորա. և ի հնչմանէ ձայնի նորա, իբրև գոչեաց արտաքս, լրեալ տարակուսեցաք, և ոչ կարացաք ըմբռնել, այլ իբրև զառիւծ վազեալ ել արտաքս: Ասեն պետութիւնք դժոխոց. մեք ըմբռնեալ ունէ՛ք զհոգին Ղազարոս իբրև ճնճղուկ մի տկար և անզաւր, կամ իբրև զմարախ մի. և ի հնչմանէ ձայնի նորա սարսեղին սանկարամեղք դժոխոց, և սրտորիչ եղև նոյի նորա, և վերացաւ ի մեկը. և տկարացեալ՝ ոչ կարացաք ձգել զնա առ մեզ: Եւ արդ երբ յարեաւ նա, որդի սատուոյ է, և զայ աստ և զերկ զիշխանութիւնս մեր. աւերեալ քանդէ զաւրարս և զպարիսպս մեր. և ինչորեալ պահանջէ ի մեկը զազոյ մարդկան: Եւ զերկինս և զերկիր վասն մարդկան արար, և այժմ եթէ զորդին իր առաքեալս վասն մարդկան.. ապա զերազոյն է այցելութիւն նորա առ մարդկան, և բարձրագոյն քան զառաջինն. և մեք ոչինչ աւգտիմք, այլ բարձեալ է իշխանութիւնս մեր, և զազարեալ է տէրութիւնս մեր:

«Ասէ սատանայ. Եթէ նա այսպէս մնայ յերկարեալ ի վերայ երկրի, ապա մեր հանգիստ ոչ գոյ ի վերայ երկրի, և ոչ աւթեանս ի մարդիկ:

«Պատասխանի նաուն պետոսրիւնք դժոխոց, և իշխանութիւնք մահու և ասեն. Երբ որդի է Աստուծոյ, իոյլ արտաշախարհն ի նա, մի՛ գուցէ և ի սանդարամետս (յարձակեալ՝ յափշտակեալ հանէ ի մէջը և զմահ և զդժոխս:

«Այս սատանայ՝ Յարացեալ եմ ի վերայ նորա զԹոդա, և զհրեայսն և զգաւաւորն, և զգաւրականսն նորա, զի զոր-

«Respondens inferus ait. Qui dum vixerunt in terris, a me mortuos tulerunt non suis potentiis sed divinis precibus... quis est iste Jesus qui per verbum a me traxit sine precibus...? Forsitan ipse est qui Lazarum quatruiduanum foetentem et dissolutum, quem ego tenebam mortuum, reddidit vivum per verbum imperii ejus.. Nec ipsum tenere potuimus, sed excutiens se ut aquila per omnem agilitatem et celeritatem salivit a nobis; et illa terra quae tenebat Lazari corpus mortuum, statim reddidit vivum. Ita nunc ego scio quia ille homo qui haec potuit facere, Deus fortis est in imperio, potens in humanitate, et salvator est generis humani. Et si perduxeris illum ad me, omnes qui sunt hic in crudelitate carceris clausi et in insolutis vinculis peccatorum constricti, solvet.

«Respondens inferus dixit (ad Satan): Si ergo potens es tu, qualis est homo ille Jesus, qui timens mortem potentiae tuae adversatur? Si ita potens est in humanitate, vere dico tibi, omnipotens est in divinitate et potentiae ejus nemo potest resistere. Adjuro te Satana, ne perducas eum ad me, ne dum velimus eum capere, captivemur ab eo...

«Cui Satan dux mortis ita respondit: Quid clamitas? noli timere... quia ego populum Iudaeo-

ծակից են ինձ որսալ զնա ի կորուստ։
Եւ յերկեան գիշերն լայր և արուստասք
խնդրէր զերծանել ի մանուսնէ, և դատաւ
պարտեցաւ, և նախառնցաւ, և յքեալ եղև
ի զարարեանն։

« Ասէն իշխանութիւնքն մահու, և պե-
տութիւնքն դժոխոց, Դոս երբեալ զգոյշ
կաց. երբ մի է ի մարդկանէ, իրև զստային
արդարան, կամ իրբէ զմարգարէան, տոն
ընդ նմա պատեալով, և մեք պատրաստեմք
զմահ և զզոտիս» ըմբռնել զմարմին և
զհոգի նորա։ Ապա երբ տեսանիցէս ի նմա
այլ ինչ զարարիս մեծագոյն փախիլ և
հրաժարես ի նմանէ, որպէս զի մի՛ գե-
րնցուք։

« Եւ եկեալ սատանայ պատրաստեաց
զամենայն, և ոչինչ կարաց տեսնել ի
գանձեցիոյ աստուածութեան նորա՝ վասն
ծածկութեան մարմնոյ նորա, յարձակե-
ցաւ լրբութեամբ ի պատերազմ։

« Եւ եղև իրբէ կատարեցին զամենայն,
յիննեբորդ ժամուն աղաղակեաց Բիսուս
ի ձայն մեծ, և զոչելով արձակեաց զո-
գին որպէս ասաց վերագոյն։ Իշխանու-
թիւն ունիմ զնեւ զանձն իմ, և իշխա-
նութիւն ունիմ առնուլ... Քանզի էնն Աս-
տուած իշխան է ամենայն հոգւոց, և զիւր
զմարդկային հոգին բաժանեաց ի մար-
մնոյն հրամանաւ աստուածութեան նորա.
այլ աստուածութիւնն անքակ և անորիշ
էր ի սեռեալ մարմնոյն. զոր աւրինակ
ոսկին և արծաթ ընդ միմեանս խառնեալ
և ի հուր արկեալ, եւ նոքա ի հրոյն ար-
տաշիկանան, և զգոյն և զսիպ հրոյն առ-
նուն, և ի հուրն երկի սպիտակութիւն
արծաթոյն, և դեղնութիւն ոսկւոյն... և
յորժամ բաժանես զոսկին և զարծաթն, և
հուրն անքակ և անբաժ մնայ յոսկին և
արծաթն, այնպէս մարդկային հոգին և
մարմինն քրիստոսի հրացեալ աստուածու-
թեամբն. այլ աստուածութիւնն անորիշ
մնայ յիւրաքանչիւրսն... Եւ կամ որպէս
ասը և այծենի խառնեալ և ծիրանի ներ-

rum concitavi adversus eum,
alapis eum ferri praecepi et
traditionem per ejus discipu-
lum in eum peregi, et est homo
multum timens mortem qui di-
xit: Tristis est anima mea us-
que ad mortem.

« Haec audiens inferus dixit ad
Satan principem: Recede a me
et exi de meis sedibus foras. Si
potens es praeliator, pugna ad-
versum regem gloriae. Si ergo
aliud agere non potes, ecce ap-
propinquat tua perditio; ego de-
nique dejectus et sine honore
manebo.

կեալ, իսկ զոյն ծիրանոյն ոչ բաժանի
ի նոցանէ, այլ հասարակ մնայ և ի բուրդն
և ի ծիրանին: Այսպէս և աստուածու-
թիւնն անհատարար էր ի մարմինն և
յանձն . . .

Իրեւ տեսին զնոսա, զարմացեալ սքան-
չացան քաղաքացիքն, քանզի ծանեան
զմեռեալս իւրեանց. և հարցեալ զնոսա
ասէին. Ո՞չ դու ես այս անուն որդի . . .
Ո՞րպէս կենդանացայք, կամ ո՞վ յարոյց զձեզ:
Եւ նոքա ասեն. Յիսուս նազովրեցի, զոր
դուք խաչեցէք, նա՞ զոչնով աղաղակեաց
ի խաչին, և սարսեցին բարապանք զժո-
խոցն. զոր աւրինակ անասունք՝ ի ձայնէ
առեւծուն, և կամ երամ երամք կաքաւ-
ուց՝ ի շառաչմանէ թևարկութեան արծ-
ւոյ: Եւ յարձակեալ աստուածահրաշ զաւ-
րութեամբն իւր՝ խորտակեաց զորոնս զժո-
ժոց, և արձակեալ հրակիզեաց զգարտրիւն
մահու, և զգերեզմանսն ունայնացոյց, և
զամենայն հոգիսն յափշտակեալ ի դոմիոցն՝
վերածեաց ի դրախտն, և զմեզ առաքեաց
այսր:

« Յայնժամ իրիւ ետես աստուայ զմար-
մնացեալ և զանժամանակ բանն Աստուած,
որ աղաղակեալ իշխանութեամբ եհան զո-
գին, ծանեաւ և ետես ի նմա զոյսն գերա-
զանցեալ. և ծանեաւ ի մարմին շարունա-
կեալ՝ զանվայրափակն աստուած. հիացեալ
զարնոյրեցաւ, և աճապարեալ փախտական
սեկանել ի դժոխս. և աղարկեաց սո իշ-
խանութիւնքն մահու, և առ պետութիւնքն
զժոխոց, և ասէ, Ազնեցիք ինձ ամենայն
մանկունք կորստեան, և սպասաւորք խաւա-
րի, արբանեակք չարի, և զործունեայք
անմաքրութեան: Արարցոցեք շորչանակի,
և աղիւնցեք զորոնս պղնձիս, և հաստատե-
ցեք զմեզ երկաթիս, զի թերեւ փոքր մի
ողի առից. քանզի տարակուսեալ վարսեմ
յանձն իմ. զի քափեցաւ կենդանութիւնն,
հարսեցաւ զարտութիւնն, և յքաւ կարողու-
թիւն իմ. և զողուիմ ունի զփոք իմ, և
խռովեցան ամենայն անդամք իմ. քանզի
զողացեալ դաւաճանեաց զիս, և խաբեալ
պատրանաւք որսաց զիս ի կարուստ:

« Dicite nobis: Quomodo cor-
poraliter manetis, qui olim de-
functi fuistis? Et quomodo re-
surrexistis a mortuis?.. Qui
respondentes dixerunt: Resur-
reximus cum Christo ab infe-
ris, et ipse resuscitavit nos a
mortuis.

Et ex hoc sciatis quod
destructae sunt portae mortis
et tenebrarum,

et animae sanc-
torum inde sunt exemptae et
in caelum conscenderunt cum
Christo domino. Haec sunt
quanta nobis jussit dominus re-
ferre vobis.

« Haec videns inferus et mors
expaverunt in propriis regnis,

agnitam tanti luminis clarita-
tem, dum Christum repente in suis
sedibus viderunt...

« Tunc Satanas dux mortis
advenit, refugiens territus di-
cens ministris suis et inferis:
Ministri mei et omnes inferi,
cucurrite portas vestras clau-
dite, et vectes ferreos suppo-
nite et pugnate fortiter, ne cap-
tivemus tenentes captivitatem.
Nam si ad vocem ejus tantum
omnis virtus mea ita destructa
est, quid putas eum facturum
dum praesentia ejus advenerit.

« Ասե՛ն պետոսիւնքն խաւարին և ամե-
նայն յեզեռն զաւրբն անկեղոց. Ո՛վ ձեզդ և
բշտաւաւորեց, ո՛չ ի վաղ ժամանակաց պա-
տոսիրեցար քեզ՝ ոչ տալ ընդ նմա պատե-
րագմ. այլ զոչ ընկժղեալ սպարաւսան ա-
րարչին, յերկնից քնակադռնենն տարացիր
արարեր զմեզ. և այժմ ընկղկեմ ամբարձար
սատուածորդայն, և ի սանդարմուտակա-
նացս տարագրեցիր զմեզ:

« Ասէ՛ սատանայ ոչ ծանեայ զնա, ո՛վ
սիրելիք, քանզի մարմինն պարածածկեալ
էր զանիմանալի աստուածութիւնն իւր. և
արդ զիտեմ հաւաստեալ, որ զկնի իմ
յարձակեալ գայ:

« Եւ ասեն խաւարային պետութիւնքն.
Վա՛յ մեզ, և եղա՛յ և՛ք. ուրեմն գայ զագգս
մարդկան պահանջել ի մէնջ, զորս կո-
րուսաք յԱղամայ մինչև ցայժմ. և զոր և
յուզէ առ մեզ՝ ըմբռնեալ ունիմք և տամք.
Բայց եթէ զխնովք և զեղիա պահանջեալ
խնդրէ, ուստի՞ տամք, զի չեն առ մեզ...

Արդ զգոյ՛շ լիրուք, զի մի՛ իմացիւն ձողիքն,
և ոսն հարկանիցեն ի վերայ մեր. յոր-
մէ հետէ եկն ախարպատաւորդին Յովհան-
նէս, ի ցնծութեան են. մի՛ գուցէ երբեք
բան ինչ պատգամի երեք ի նմանէ առ նո-
սա, զի յայնմ արէ զուարճացեալ ցնծան
ամենեքեանս. Արդ՝ ամբացուցք շորչանակի
յազում զգուշութեամբ:

« Եւ միեկտեղ պետոսիւնքն զոմիոց ի
զգուշութեան էին, անա անուն զաւրբ մաք-
րեցեոց նրնչտակաց նախընթաց եղեալ առ-
տուածորդովն՝ քանոսրեամբ և ուժեղ զաւ-
րութեամբ ժամանեալ առ դուստ զոմիոցն,
ազդ արարեալ աղաղակիկն առ կործեցեալ
պետոսիւնն սանդարմուտաց. Համբարձէք
սնտոսի իշխանք զորոնս ձեր ի վեր, և մոցե
յազատար փառաց:

Եւ յանցեաւ եղեալ յաւ-
րապանք զոմիոցն և սսեմ՝ Ո՛վ և սա յա-
զատար փառաց:

« Dehinc inferus Satanae ita
perintulit: O princeps Satan,
auctor mortis et origo omnis
superbiae, debueras primam i-
stius Jesu causam malam re-
querere: Quare sine ratione in-
juste eum crucifigere ausus
fuisti, et ad nostram regio-
nem innocentem et justum per-
duxisti, et totius mundi noxios
impios ed injustos perdidisti.

...Vae! tibi erit in sempiterna
secula...

(Եղ. ԻԵ՛Ւ ԷԶ 9, ՀՄՄՏ. 3.)

Tunc impia officia ejus
conturbata sunt

et coeperunt
portas mortis cum omni dili-
gentia claudere...

« Haec autem audientes om-
nes Sancti ab Esaia dixerunt
ad inferum: Aperi portas tuas...
Et facta est vox magna ut toni-
trum dicens.

« Tollite portas principes ve-
stras, et elevamini portae in-
fernales, et introibit rex glo-
riae.

Videns inferus... quia duabus
vicibus haec clamaverunt, qua-
si ignorans dicit: Quis est rex
gloriae?

« Յայնժամ լուսն բանդարդեալ հոգիքն լղձայն՝ զնալոյ տեսան աստուծոյ, ընդ եւրեկա աւուրն, ի դրունս դժխոցն»։ Չայն ասնտեսաց մատուցանէր Աղամ հոգացն որ պահպանեալ էին ի դժոխս, և ասն. Յնժամքեամք ընդկրեալիք, ո՛վ սիրելիք. բանգի աստուած արարչագործ ենաս մեզ ի փրկչորսին։

« Էս պատասխանեալ հոգացն ասն. Ո՞րպէս զիտացեր և ծանեար, ո՛վ հայր մեր, երբ եկն տերն փառաց խնդրել զկորուսեալս։

« Էս ասն Աղամ. Յորժամ վրիպեալ կուդոպտեցայ ի պատուիրանացն աստուծոյ, իջեալ աստուած ընդ երեկս՝ յաւուր ուրբաթուն գնայր ի դրախտին... և արդ ի սոյն տարածամեալ ուրբաթուս եկեալ ժամանեաց ոտնաձայնիւ. և հանցէ զմեզ ի ըստուերաց մահոս։

« Իբրեւ տեսին հոգիքն՝ երբ զորոնս դժխոց ընդդիմ աղիսցին, տարախոսեալ վարանին, երբ գուցէ արդեաւք ընդդիմանայցեն աղիսիք բանորեաւմք։

« Յայնժամ քննեալ հարցանելին գմարդուրեան, երբ սրպէս խառնեցաւ Հոգին սուրբ վրան առարս սրանէրեալս և հանդիմանեալ պատերազմաւ... Ասէ Մովսէս. Ձի հուր բորբոքեցաւ ի բարկութենէ իմմէ, այլ իցէ և իջէ ի դժոխս ներքինս։

Էս Դաւիթ ասն. Ո՞ր ետեսին ի խաւարի և ի ստուերս մահոս, և կոպեալ էին յերկարս, փշեաց զորոնս պղնձիս, և զնիզս երկարիս խոր։

« Tunc omnes Sancti audientes vocem patris nostri Adae, quum constanter Satanae respondit per omnia, in gaudio confortati sunt.. Tunc pater Adam audiens ista clamavit voce magna Alleluia conclamans, quod interpretatur : Dominus venit per omnia..

« Ad cujus vocem et omnes converti interrogabant eum: Tu quis es? quia vera sunt quae loqueris.

« Adam vero... magna voce dixit: Dominus Deus clamavi ad te et sanasti me;

Eduxisti ab inferis animam meam, salvasti a descendentibus in lacum...

« Audiebant autem sancti contentionem Satanae et inferni; ipsi tamen adhuc intra se minime se recognoscentes nihilominus erant in cognitione...

Statim omnis generis humani pater cum omnibus patriarchis et propetis exultaverunt... Et exclamavit David dicens: Nonne cum essem vivus in terris et docente me spiritu Sancto praedixi vobis: Confiteantur domino misericordiae ejus, et mirabilia ejus filiis hominum...

« Tunc Sanctus Davit fortiter clamavit dicens: Cantate domino canticum novum, quia mirabilia fecit.. Contrivit portas

1. Աս տեղիս նիւթապէս և անյարմար կերպով փոխ առնուած է Թէոփիլոսի Անտիոքացւոյ վրան քարման և յարուրեան յիսուսի քրիստոսի աստուծոյ մերոյ ճառէն, ուր սակայն գեղեցիկ հակադրութեան ձեռով կ'ըսուի, « Լուս և եւս զոտնաձայն քո ի դժոխս, և մատուցեալ

աւետիս տալը նախաստեղծին և ասէ. Նախ ես լուս զձայն հրապուրանաց բանասարկութիւն... և արդ լուս զոտնաձայն ո՛վ ի պրախտին, այլ ի դժոխս, զի զայ աստուած մարգագեալ՝ ո՛չ ի դատապարտել մահուամբ, այլ վասն ազատութեան կենաց»։

տակեաց, և ասաց Տէր. ի խորաց անկեղոց
դարձուցից, և ի միջոյ ժամեաց զոյն (գիմն)
ի դուրս կորցեցից. և էլ ի բարձունս և ցե-
րեաց զգերութիւն, աւս ասար, բաշխեաց պար-
զեւ և ևս որչոյց մարդկան:

« Եւ անս ժամանեալ հպեցաւ տէրն զաւ-
րարեանց աս դուրս դժոխաց, և հարեալ
կործանեցան դուռնք պղնձիք և երբք երկա-
թիք, և յոյս հրաշափառ յատուածային
ծագմանն ձառագոյրիցն ժառայեալ լցին ըզ-
վայրս ստորինս անկեղոց, և աներեցին զյը-
ծոխս և զերեցին զգարարութիւն մահաւ, և յա-
սարի ետար զամենայն մքերս սատանայի:

« Եւ հնչեալ աղաղակէին ամենայն
զարբ սանդարապետականաց. Ոչ մի
մթին տեղի գտցուր և յապահովեալ թա-
գիցուր, յարփիափալ և կիզական ճա-
ռագայթից նորա, անապատ արար զդժոխս
ի բնակչաց: Եւ ամենայն տիեզերք շար-
ժեցան զկնի Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի՝ փառաց թագաւորին »:

Չաքարիայի յիշեալ ճառէն քաղուած
հատուածներէս ոմանք իրեն յատուկ են,
ոմանք Եղիշէէն առնուած, և մեծաւ մա-
սամբ ալ Նիկիդ. Աւետարանէն փոխառեալ
են, ինչպէս ցոյց կու տան հանդիպականց
համեմատութիւնքն: Եւ որովհետեւ Եղի-
շէէն փոխառեալ հատուածներն Չաքա-
րիայի քով — ինչ ինչ նոր պարագաներով
— աւելի մերձաւոր աղերս ունին Նիկ.
Աւետարանին հետ՝ մէկ կողմէն, և միւս
կողմէն ալ դիտելով որ Չաքարիա կաթո-
ղիկոս՝ Եղիշէէն շատ աւելի ընդարձակ
չափով փոխառութիւններ ըրած է յիշեալ
զրբէն. և թէ այդ փոխառութիւններն թէ՛

aereas et vectes ferreos con-
fregit: Suscepit eos de via ini-
quitate eorum: Salvavit sibi
dextra ejus et brachium sanc-
tum ejus: Notum fecit domi-
nus salutare suum, ante con-
spectum gentium; revelavit ju-
stitiam suam...

« Etecece dominus Jesus Chri-
stus veniens in claritate ex-
celsi luminis... Et ecce subito in-
fernus contremuit, et portae
mortis et serae comminutae et
vectes confracti sunt et ceci-
derunt in terram, et patefacta
sunt omnia. Et Satanas reman-
sit in medium, stabatque con-
fusus et dejectus ».

(Եղեւէ՛ էջ 7. ՀՄԾՏ. 3.)

ըստ առաջախաղաց կարգի և թէ՛ բառացի
կերպով կը նոյնանան Նիկող. Աւետարանի
(= Պիղատոսի Յիշատակարանաց) հետ:
Ուստի կրնանք եզրակացնել՝ Ա. թէ Չա-
քարիա կաթողիկոս իւր յիշեալ ճառը —
ինչպէս նաև ի յարչարանս Քրիստոսի Աւ-
տոծոյ ընդարձակ ճառն — զրած ժամա-
նակ՝ աչքի առաջ ունեցեր է միանգամայն
և՛ Անվաւերականիս հայկական թարգմա-
նութիւնն և՛ Եղիշէի ճառերը: Երկուքին
հետ ևս նոյնպէս վարուեր է. երկուքն ևս
իրենց ամբողջութեամբը գործածեր՝ Բ.
թէ Եղիշէին և Չաքարիա կաթողիկոսին
նոյնպէս ծանօթ են նաև թէ՛ փոխորդս ի

1. Եւ ստուգել՝ Չաքարիայի այս երկու ճառե-
րուն մէջ այնքան ընդարձակ քաղուածներ կան
Եղիշէի նոյնանիւթ ճառերէն, որ բաղգատողը

պահ մը կը կարծէ թէ Եղիշէն է որ կը կարդայ.
այսպէս վերջնոյն քով ալ նպիփանի և թէ՛ փո-
խորդս յիշեալ ճառերէն փոխառութիւններ:

գերեզմանն աստուածորեկոյ, և Վստե րադման և յարոյրեան քրիստոսի յիստի ստտոծոյ մերոյ երկու սքանչելի ճառերն: Եւ ճառերէս վերջնոյն — որ կը գտնուի մեր թիւ 1447 ճառերնորին մէջ և թուղթ մը կտրուած է — առանց խորագրի կը շարայարի Նիկողիմոսի Աւետարանին Բ. մասը, իսկ Հ. Երես. Վ. Սարգսեանի ձեռքով Բաղիշու հին Ձեռագրէ մ'ընդօրինակուած ի՞նչ. ճառերնորին՝ առաջնոյն պակասաւոր թուղթն ալ ունի, որ Նիկող. Աւետարանէն փոխառեալ է, և աւելին ալ կար հաւանօրէն, բայց չգիտեմ ինչ պատճառաւ զազափարողը զանց ըրած է ամբողջապէս օրինակելու, զնեւով « Եւ եւն եւն »: Յամենայն դէպս՝ թէպէտեւ Նիկղ. Աւետարանէն Թէոփիլոսի յիշեալ ճառերուն մէջ փոխառեալ տեղիքն Եղիշէի և և Զաքարիա կաթողիկոսի համեմատուած հատուածներուն հետ գործ չունին, բայց ասոնց ի չարչարանս և ի յարոյրին քրիստոսի աստուծոյ մերոյ ճառերում մեր նշանակած էջերուն հետ սերտ աղերս ցոյց կու տան և ուշադրութիւն արժանի են: Ասալ ըսենք որ ոմանք սխալմամբ Զաքարիայի յիշեալ ճառը՝ Թէոփիլոսի վերագրած են, որ չէ ուղիղ. Գ. Թէ ինչպէս Եղիշէի ճառերն այսպէս ևս Նիկ. Աւետարանի հայկական թարգմանութիւնն ամբողջապէս թ. դարէն յառաջ գոյութիւն ունէին, և հետեւաբար հին. և կը յուսանք թէ ուշ կամ շուտ այդ անյայտացած մասն ևս կը յայտնուի և լաւագոյն կերպով կը հաստատէ մեր ըսածները վերստին:

Գալով ուղղակի Պիղ. Յիշատակարանաց կամ Նիկղ. Աւետարանի մեզ հասած

գէթ Ա. և Բ. մասերու հայկական թարգմանութեան՝ (ըստ վենետեկեան հրատարակութեան առաջին խմբագրութեան), կ'ըսենք որ Ե. դարու վերջը և կամ Զ. դի առաջին կեսին յատուկ լեզուի և ոճի նկարագրի ունի՝ քան թէ ութերորդին. որովհետեւ նախ որ այդ լեզուն յունարանութենէ զերծ է — զոր յԲ. դարուն ի զուր է որոնել — Եւ երկրորդ՝ համեմատաբար Աւետարանաց նման ընտանեկան և պարզ լեզուով եղած է և ըստ բաւականի մաքուր, ի բաց առեալ՝ ի հարկէ այն քանի մը բառերը և բացատրութիւններն, որոնք հաւանօրէն հաւաքողներու կամ ընդօրինակողաց ձեռքով և ետքէն սպրդած են և կամ աղաւաղուած — ինչպէս ցոյց կու տան զըշագրաց տարբերութիւնն, և մասնաւորապէս մեր ի՞նչ. ճառերնորին, Գանձակեցի Կարապետ եպիսկոպոսի գրչութեամբ:

Յունարէնէ ուղղակի թարգմանուած ըլլալու կամ չըլլալու մանրամասն ուսումնասիրութիւնը ուրիշներուն կը թողում, յոգուածս չափէն աւելի չընդարձակելու համար. այլ այսքանս հարկաւոր կը համարիմ ըսել որ՝ խորագրութիւններու նոյնութեամբ հանդերձ՝ երկուստեք մեծ տարբերութիւններ կան շատ մը յատուկ առնունքերու, երբայական ինչ ինչ ասացուածներու և զանազան պարագաներու յառաջբերութեանց մէջ, այլովք հանդերձ. որոնց վրայ յատկապէս կը հրաւիրենք ուսումնասիրաց ուշադրութիւնը:

Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

